ՈՐՈՇՈՒՄ

ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

« 02 » փետրվարի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Տ.Քաջազնունիս, վերանայելով վարույթիս թիվ 17887317 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

11.10.2017թ.՝ ժամը 11:30-ին, ՀՀ ՊՆ Երևանի կայազորային հոսպիտալից ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ «որովայնի աջ կեսի կտրած ծակած վերք» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել Սամվել Կորյունի Խաչատրյանը:

12.10.2017թ.՝ ժամը 18:30-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է տվել Սամվել Կորյունի Խաչատրյանն այն մասին, որ 11.10.2017թ.՝ ժամը 08:00-ի սահմաններում, Նոր Նորքի 5-րդ զանգվածի Միկոյան փողոցում գտնվող նախկին «Զելդն» սուպերմարկետի մոտ Էդո անունով անձը դանակով հարվածել է իր որովայնին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ ոմն Էդոն հանդիսանում է Էդգար Հրայրի Կուրղինյանը:

Դեպքի առթիվ 23.10.2017թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 113 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով հարուցվել է թիվ 17887317 քրեական գործը:

23.10.2017թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնից ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին է ստացվել թիվ 17887317 քրեական գործը և ընդունվել վարույթ:

Նախաքննության ընթացքում տուժող Սամվել Խաչատրյանը ցուցմունք է տվել այն մասին, որ իրականում իրեն ոչ ոք դանակով չի հարվածել, այլ 11.10.2017թ.՝ ժամը 07:45-ի սահմաններում, ինքը, իրենց բնակարանի խոհանոցից վերցնելով դանակ, գնացել է Երևան քաղաքի Նոր Նորքի 5-րդ զանգվածի Բ.Մուրադյան փողոցի 7-րդ շենք, նշված շենքի թիվ 3 շքամուտքով բարձրացել 9-րդ հարկի աստիճանահարթակ, այնուհետև դեպի տանիք դուրս եկող հատված, որտեղ ինքնասպանություն գործելու նպատակով հիշյալ դանակը պահելով աջ ձեռքում՝ հպել է իր գոտկատեղի աջակողմյան հատվածին և ուժ գործադրելով ինքն իրեն վնասել:

31.10.2017թ. Սամվել Խաչատրյանի մասնակցությամբ կատարված դեպքի վայրի զննության ժամանակ Երևան քաղաքի Նոր Նորքի 5-րդ զանգվածի Բ.Մուրադյան փողոցի 7-րդ շենքի թիվ 3 շքամուտքի 9-րդ հարկի աստիճանահարթակից դեպի տանիք դուրս եկող հատվածի ձախ կողմում առկա թվով 3 մետաղյա դռներից մեջտեղի դռան մետաղյա շրջանակի վրայից հայտնաբերվել է կարմիր բռնակով, մոտ 16 սմ ընդհանուր երկարությամբ դանակ՝ շեղբի վրա կարմրավուն արնանման հետքերի առկայությամբ, որը վերցվել և փաթեթավորվել է:

Նկատի ունենալով, որ Սամվել Կորյունի Խաչատրյանի հոգեկան հիվանդությամբ տառապելու, նրա մտավոր զարգացած լինելու աստիճանը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության և հոգեբանության բնագավառների հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 85-րդ, 243-245-րդ և 249-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության փորձագետներին:

2.Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

- ✓ Ինչպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ ունի Սամվել Կորյունի Խաչատրյանը:
- ✓ Սամվել Կորյունի Խաչատրյանին բնորոշ են այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնք կարող էին էապես ազդել հետազոտվող իրավահճակում նրա վարքի վրա:
- ✓ Հաշվի առնելով Սամվել Կորյունի Խաչատրյանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ և անձնային զարգացման մակարդակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը՝ կարող էր արդյոք նա հասկանալ իր կողմից կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը:
- ✓ Որոնք են Սամվել Կորյունի Խաչատրյանի իմացական գործընթացների անհատական առանձնահատկությունները և նա կարող էր արդյոք ճիշտ ցուցմունքներ տալ:
- ✓ Սամվել Կորյունի Խաչատրյանը հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- ✓ Արարքի կատարման պահին Սամվել Կորյունի Խաչատրյանը հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- ✓ Ներկայումս Սամվել Կորյունի Խաչատրյանը հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկում նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- ✓ Սամվել Կորյունի Խաչատրյանը կարող է արդյոք ճիշտ ընկալել երևույթները, թե ոչ, ընդունակ է արդյուք երևույթների ճիշտ ընկալման և վերարտադրման, նրա մոտ հոգեկան սթրեսի երևույթներ նկատելի են, թե ոչ:
- ✓ Սամվել Կորյունի Խաչատրյանը իր հոգեկան վիճակով ներկայումս կարող է մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին:
- ✓ Ինչպիսի հոգեվիճակում է եղել Սամվել Կորյունի Խաչատրյանը ինքնասպանություն փորձ գործելուն նախորդող ժամանակահատվածում:
- ✓ Արդյոք առկա է եղել պատճառահետևանքային կապ Սամվել Կորյունի Խաչատրյանի կողմից ինքնասպանություն փորձ գործելուն նախորդող ժամանակահատվածի հոգեկան վիճակի և Շուշանիկ Սարգսյանի, Զավեն Խաչատրյանի կամ Էդգար Կուրղինյանի գործողություններ միջև, եթե այո, ապա ինչպես են դրանք արտահայտվել:
- ✓ Ինչ դրդապատճառով է պայմանավորված Սամվել Կորյունի Խաչատրյանի կողմից ինքնասպանության փորձ գործելը:
- ✓ Սամվել Կորյունի Խաչատրյանը ինքնասպանությունը կատարել է պահի ազդեցության տակ, թե գործել է պլանավորված:

3.Փորձագետներին խնդրել պատասխանել նաև փորձաքննության պահին ի հայտ եկած և որոշմամբ չառաջադրված հարցերին, որոնց պարզաբանումը կարող է ունենալ կարևոր նշանակություն փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4.Փորձագետներին ներկայացնել սույն որոշումը, Սամվել Կորյունի Խաչատրյանին, անհրաժեշտության դեպքում նաև քրեական գործի նյութերը:

5.Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները: Միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց

հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ, 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված քրեական գործի կամ այլ նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ L.S.Քաջազնունի